ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգանուշ, (093)660602, mrganush.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 27

ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ 08.12.2017ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

Որոշեցին

Հաստատել համայնքի 08.12.2017թ. թիվ 10 նիստի հետևյալ օրակարգը.

1.2018թ-ի Մրգանուշ համայնքի տեղական տուրքերի և վճարների մասին:

2.Համայնքի ղեկավարի աշխատավարձի,համայնքապետարանի աշխատակազմի,ինչպես նաև համայնքապետարանի ենթակա օբյեկտների աշխատողների թվաքանակի,հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:

3.Գույքահարկի արտոնություն տրամադրելու մասին:

Կողմ -4
Դեմ -0
Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգանուշ, (093)660602, mrganush.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 28-Ն

2018ԹՎԱԿԱՆԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18կետի պահանջներով

ՈՐՈՇԵՑԻՆ

1.Համայնքի կենտրոնական Նար-Դոսի փողոցը համարել առաջին գոտի:

2.Համայնքի գյուղամիջյան ճանապարհները համարել երկրորդ գոտի:

3.Հաստատել համայնքի 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան համայնքի վարչական տարածքում նոր շենքերի,շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման)(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի)թույլտվության համար.

ա.հիմնական շենքերի և շինությունների համար

մինչև 300 քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում այգեգործական(ամառային)տների,ինչպես նաև 200 քառ.մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների ի համար 15000 դրամ:

բ.սույն կետի, << ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

-201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ:

-501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝50000 դրամ:

-1001-ից 3000քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝50000դրամ:

-3001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝100000դրամ:

գ.ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

-20քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝3000դրամ:

-20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝5000դրամ:

2)Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման,վերականգնման,ուժեղացման,ադիականացման և բարեկարգման աշխատանքների/բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա.չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/այդ թվում ստորգետնյա/հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝3000դրամ:

բ.բացի շենքերի և շինությունների վերակառուցման,ուժեղացման,վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից,նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների,շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների/այդ թվում ստորգետնյա/հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա բացի սույն կետի,աե ենթակետով սահմանված դրույքաչափից ,կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով,

գ.նախատեսվումէ միայն կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/այդ թվում ստորգետնյա/շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3)Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) թույտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000դրամ:

4)համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝օրացույցային տարվա համար՝200000դրամ.

6)համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի,մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝օրացույցային տարվա համար՝60000դրամ.

8)համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝օրացույցային տարվա համար՝50000

9)համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա.ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

-մինչև 26քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝6000դրամ:

-26-ից մինչև 50 քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝10500դրամ,

-51-ից մինչև 100քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝13500դրամ

-101-ից մինչև 200 քառակուսի մետր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝20500դրամ

-201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝25500դրամ

բ.ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝

-մինչև 26քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000դրամ:

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝10500դրամ

-51-ից մինչև 100քառակուսի մետր մակերես ընդհանուր ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝13500դրամ

-101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝20500դրամ

-201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝25500դրամ,

10)իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում,Առևտրի և ծառայությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝յուրաքանչյուր օրվա համար՝350դրամ՝1քմ մետրի համար.

11)Համայնքի վարչական տարածքում առևտրի,հանրային սննդի,զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին,բաղնիքներին,խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝տեղական տուրքը օրացույցային տարվա համար սահմանվում է՝

ա.առևտրի օբյեկտների համար՝50000դրամ

բ.հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝100000դրամ

գ.բաղնիքների(սաունաների)համար՝500000դրամ

դ.խաղատների կազմակերպման համար՝1000000դրամ

ե.շահումով խաղերի կազմակերպման համար՝500000դրամ

զ.վիճակախաղերի կազմակերպման համար՝150000 դրամ

12)համայնքի վարչական տարածքում,համայնքային կանոններին համապատասխան,հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա.հիմնական շինությունների ներսում՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի կազմակերպման և իրացման համար՝ 5000դրամ

-26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝10000դրամ

-51-ից մինչև 100քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝15000դրամ

-101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝20000դրամ

բ)ոչ հիմնական շինությունների ներսում՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի կազմակերպման և իրացման համար՝ 1000դրամ

-26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝2000դրամ

-51-ից մինչև 100քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝4000դրամ

-101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝8000դրամ

14)ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար,բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների,յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա.ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝2000դրամ,

բ.թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս)արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝3500դրամ,

գ.սոցիալական գովազդի համար՝0 դրամ,

դ.այլ արտաքին գովազդի համար՝1500դրամ,

ե.դատարկ գովազդային վահանակների համար՝համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով,

զ.եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի չափով.

15)Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը/գինանշան,անվանում և այլն/,որպես օրենքով գրանցված ապրանքային նշան,ապրանքների արտադրության,աշխատանքների կատարման,ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝օրացույցային տարվա համար՝100000դրամ

16)համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների/ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝10000դրամ.

2.Սույն հոդվածի 4-րդ կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերը Մրգանուշի գյուղական համայնքում ավագանու որոշմամբ հաշվարկել 0.5գործակցի կիրառմամբ:

3.Սույն հոդվածի 4-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված դրույքաչափը Մրգանուշի գյուղական համայնքում ավագանու որոշմամբ հաշվարկել 0.75գործակցի կիրառմամբ,առաջին գոտու համար:

4.Սույն հոդվածի 4-րդ կետի 5-16-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերը Մրգանուշի գյուղական համայնքում ավագանու որոշմամբ հաշվարկել է 0,3 գործակցի կիրառմամբ:

Տեղական վճարների դրույքաչափերը

1.Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1)համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝1000դրամ,

2)ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող,բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների /այդ թվում՝դրանց վերակառուցումը,վերականգնումը,ուժեղացումը,արդիականացումը,ընդլայնումն ու բարեկարգումը/կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝1000դրամ,

3)ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝1000դրամ,

4)համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու,հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի /փաթեթի/նախապատրաստման համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝1000դրամ

5)համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝1000դրամ,

6)համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին /վերնիսա-ներին/մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝500դրամ,

7)համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ փոխհատուցման վճար՝200դրամ:

8)աղբահանության վճար՝

ա.առևտրի և հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների համար աղբահանության վճար սահմանել՝ ամսեկան 20 դրամ, 1քմ համար

բ.արտադրական:արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար աղբահանության վճար սահմանել՝ ամսեկան 6դրամ,1քմ համար

գ.կրթական,մշակութային,առողջապահական,սպորտային,գիտահետազոտական շինությունների համար աղբահանության վճար սահմանել՝ ամսեկան 3դրամ,1քմ համար

դ.համայնքի անդամների համար աղբահանության վճար սահմանել՝ ամսեկան 100 դրամ մեկ շնչի համար:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ

3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգանուշ, (093)660602, mrganush.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 29

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ,ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ,ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԵՆԹԱԿԱ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ մասով

Որոշեցին

Հաստատել համայնքի ղեկավարի աշխատավարձը,համայնքապետարանի աշխատակազմի ինչպես նաև համայքապետարանին ենթակա օբյեկտների աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

Աշխատակիցների թվաքանակը՝13

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը ՀՀ դրամ
Համայնքի ղեկավար		190000
Համայնքային ծառայության պաշտոններ		
Համ. համայնք. աշխ. քարտուղար(1.2-1)	1	152000
Աշխ. գլխավոր մասնագետ (2.3-1)	1	142000
Աշխ. առաջատար մասնագետ(3.1-1)	1	120000
Աշխ. առաջին կարգի մասնագետ(3.2-1)	1	119000

Աշխ.երկրորդ կարգի մասնագետ	(3.3-1)	1	110000
Քաղաքացիական աշխատանք			
Հարկահավաք		1	80000
Գյուղ գծով մասնագետ		1	118000
Տնխ.սպասարկման անձնակազմ			
Պահակ		1	80000
Քաղաքացիական աշխատանք			
Մշակույթի տան տնօրեն		1	80000
Գրադարանավար		1	75000
Մարզիչ/շախմատի/		1	80000
Մարզիչ		1	75000

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգանուշ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգանուշ, (093)660602, mrganush.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 30

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով

Հաշվի առնելով այն հանգամանքը,որ Սարիկ Խաչատրյանը արցախյան պայքարի վիրավոր ազատամարտիկ է

Որոշեցին

Մրգանուշ համայնքի բնակիչ՝ Սարիկ Խաչատրյանին գիջել իր սեփական ավտոմեքենայի գույքահարկը 9500 դրամի չափով:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ